Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.08.2020թ. թիվ 2011473245 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<22>> 09 2020թ. 7-13 11685 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Զոհրաբ Սարոյանի ՄԴ/126050-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արցախի փողոցի 8 շենքի 19 բնակարանի բնակիչ Զոհրաբ Սարոյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.08.2020թ. թիվ 2011473245 որոշմանը՝ նշելով, որ համաձայն չէ տեսախցիկի նկարած տուգանքի հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին: Ըստ նույն որոշման 18-րդ կետի՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝<<Կանգ-գիծ>> նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար և այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: **Ըստ նույն որոշման 19-րդ կետի՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:**

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա դիմումատուի <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին՝ արգելող ազդանշան: Այսպես՝

- տեսանյութի 15:45:24-րդ վարկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,
- դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է միայն տեսանյութի 15:45:29-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի դեղին արգելող ազդանշանը:

Տեսանյութի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ լուսացույցի արգելող դեղին ազդանշանի ժամանակ դիմումատուի ավտոմոբիլը գտնվել է <<Կանգ-գիծ>> գծանշման առջև անշարժ վիճակում, ուստի հերքվում է նաև դիմումատուի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջի ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն հնարավորություն է ունեցել տրանսպորտային միջոցը կանգնեցնելու առանց կտրուկ արգելակելու:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում դիմումատուի իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.08.2020թ. թիվ 2011473245 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Զոհրաբ Սարոյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Ա.Ղափլանյան
Հեռ.011544783